**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ուսուցչի աթոռի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/26 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի հոկտեմբերի 27-ին կնքված N ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/26-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի մայիսի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Պայմանագրի առավել արդյունավետ կատարումն ապահովելու նպատակով Պայմանագրով նախատեսված որոշ ապրանքատեսակների քանակությունների փոփոխություն-ավելացում:

**Փոփոխության նկարագրություն՝** Պայմանագրի շրջանակում կատարված փոփոխությունների արդյունքում.

- Պայմանագրի 3.1 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «3.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 7,288,320.00 (յոթ միլիոն երկու հարյուր ութսունութ հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ (այսուհետ նաև՝ Պայմանագրի գին) ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:»:
- Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ով ներկայացվող աղյուսակի «ընդհանուր գինը/ՀՀ դրամ» դաշտի «7,276,640.00»-ը փոփոխվել է «7,288,320.00»-ով, իսկ «ընդհանուր քանակը» և «ենթակա քանակը» դաշտերում նշված «623»-ը փոփոխվել է «624»-ով:
- Ավելացված լրացուցիչ ֆինանսական միջոցների և քանակության համար ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ սահմանվել է 39111140/6-ն:
- Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի Հավելված 1.1-ի «ՑԱՆԿ՝ անհրաժեշտ քանակների»-ի աղյուսակում ավելացել է քանակներ և նշյալ տեղեկատվությունը շարադրվել է նոր խմբագրությամբ համաձայն համաձայնագրի Հավելված 1-ի:
- Հաստատվել է Պայմանագրի վճարման ժամանակացույցը համաձայն համաձայնագրի Հավելված 2-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 2)-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, ինչպես նաև հիմք ընդունելով Պայմանագրի 8.5 կետը:

Պատվիրատու՝ **ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ**